№ 164 Հոկտեմբերի 29 Շաբաթ 1883 Հոկտեմբերի 29 Շաբաթ № 164

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիֆլիսի մթերանոցը։ Լօռու գաւառը և Ջալալ-Օղլին։ Նամակ խմբագրին։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆրինկո Բալաբան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԹԵՐԱՆՈՑ

—

Այս վերնագրով „Кавказъ“ լրագրի մէջ կարդում ենք հետևեալ յօդուածը։ Հոկտեմբերի 9-ին Ս. Պետերբուրգի մէջ Սենայա հրապարակի վրա կայացաւ կենտրոնական մթերանոցի հիմնադրութիւնը։ Մայրաքաղաքի վարչութիւնը, որ վաղուց ուշադրութիւն էր դարձրել այդ ամենակարևոր գործի վրա, միայն այժմ կարողացաւ իրագործել իր միտքը, այն է՝ Ս. Պետերբուրգի մէջ արտասահմանեան centralle-halle-ի նման կենտրոնական մթերանոց կազմել և այդպիսով միջոց տալ գիւղական վաճառականներին՝ թարմ պահել իրանց մթերքները։ Այդպիսի մթերանոցի օգտաւէտութիւնը վաղուց ճանաչված էր, բայց մինչև այժմ չէին կարողացել գործը ի կատար հանել։ Դեռ 1860 թուականին մանաւոր ձեռնարկողները առաջարկեցին քաղաքին իրանց հաշվով կառուցանել մթերանոցի շինութիւնը, իրաւունք պահելով նրանից 30 տարի օգտվելու, բայց այդ առաջարկութիւնը քաղաքը շահաւէտ չը համարեց և մերժեց։ Միայն այս տարի մայրաքաղաքը որոշեց սկսել մթերանոցի շինութիւնը, որը ամբողջապէս քաղաքին կը նստի 390,521 ռուբլի։

Չէ կարելի չուրախանալ Ս. Պետերբուրգի բնակիչների համար, որոնք շուտով աւելի թարմ և մաքուր մթերքներ կունենան, բայց մի և նոյն ժամանակ անկարելի է չը մտածել մեր սեփական գրութեան մասին։ Թիֆլիսի մթերանոցների դրութիւնը ամեն տեսակ կրիտիկայից ստոր է։ Մենք նրանց պահպանել ենք նոյնութեամբ, ինչպէս մեզ աւանդել են վրաց ու պարսից թագաւորները, որոնք, ինչպէս յայտնի է, շատ քիչ էին մտածում հասարակական առողջապահութեան մասին։ Մեր մանավաճառների խանութները քիթը չը բռնած անկարելի է մտնել։ Բանջարեղէնների խանութներից դուրս է գալիս փըթող կաղամբի և այլ կանաչեղէնի հոտը, իսկ հոտած ձուկը խանութից հեռու է տարածում իր գարշահոտութիւնը։ Առանց զզուանքի չէ կարելի անցնել Թուրքի մայդանի և Սալդատսկի բազարի մօտ, որովհետև ամեն տեղից հոտած մթերքների և փտելու հոտ է զգացվում։ Բայց ապրանքները չեն մնում, որ վերջնականապէս փըտեն, որովհետև արագ առնվում են և տեղաւորվում են Թիֆլիսցիների ստամոքսի մէջ։ Մի քանիսները նրանց զանազան սոուսներով են պատրաստում, իսկ միւսները հէնց այնպէս էլ ուտում են։ Դրա հետևանքները ամեն կերպ հիւանդութիւններն են։ Մեր անհոգութիւնը այն աստիճանի է հասնում, որ մենք չենք հետաքրքրվում իմանալ Թիֆլիսի մէջ հիւանդացողների և մեռնողների թիւը։ Հարկաւոր է որ մեռնողների թիւը մեծ չափեր ստանայ, որպէսզի մեր հասարակական քնած միտքը արթնանայ։ Բայց մինչև ամպը չը գոռայ, մենք չենք խաչակնքվի։ Ցիշեալ երկու մթերանոցներն էլ գտնվում են քաղաքի ամենախիտ բնակեցրած և ամենատափարակ տեղերում։ Իսկապէս դրանք վարակման բներ են։ Խանութները մինչև անգամ տարրական յարմարութիւններ չունեն. նրանցից ոչ մէկը ջուր չունի մթերքները թարմ և մաքուր պահելու համար, կանաչեղէնի, մսի կաշիների կտորները և անմաքուր ջուրը ածելու համար տեղ չը կայ, մինչև անգամ վաճառողները տեղ չունեն իրանց բնական կարիքների համար։ Զարմանալի՞ է միթէ, որ մեր մթերանոցների վրա մնում է յաւիտենական հոտած և չը ցամաքող ցեխ։ Զարմանալի է միթէ՞, որ վաճառողներից իւրաքանչիւրը աշխատում է իր ապրանքի մնացորդները զետեղել ամեն տեսակ յարմար և անյարմար տեղերում։ Կեղտոտ ջուրը փողոցի վրա են թափում, մնացորդները նոյնպէս այնտեղ, իսկ իրանք իրանց բնական կարիքները կատարում են մի և նոյն տեղը, ի հարկէ, բաց օդում։

Քաղաքը իսկապէս ոչինչ չէ արել այդ անյարմարութիւնների առաջն առնելու համար։ Ինչ կը վերաբերի քաղաքային առողջապահական մասնաժողովներին, նրանք միայն թղթի վրա գոյութիւն ունեն և քաղաքը ամենևին չէ զգում նրանց հոգատարութիւնը։ Արդեօք ժամանակ չէ՞, որ քաղաքը արթնանայ, նայի իր վրա և տեսնի, թէ ինչպէս է ապրում և ի՞նչով է կերակրվում։

Ճշմարիտ է, երբեմն ձայներ են բարձրացել մեր մթերանոցների բարւոքման մասին, բայց նրանք շուտով լռել են, երբ նրանց ցոյց են տուել այն գումարը, որ կը հարկաւորվի այդպիսի բարւոքման համար։ Ի հարկէ 100,000 բնակիչ ունեցող քաղաքին էժան չի նստի իր մթերանոցի կազմակերպելը։ Բայց եթէ անկարելի է վերաստեղծել և վերանորոգել դարերի ժառանգութիւնը, գոնեա ի՞նչի մի քանի քայլ չունենք այդ վերաստեղծմանը մօտենալու համար։ Ի՞նչի չը կազմել այդ մթերանոցը, օրինակի համար Արծրունու քարվանսարայում, որտեղ ահագին տեղ կայ, մեծ բակ, ջրանցք և անմաքրութիւնների համար խողովակներ։ Ներքին յարկի փոքրիկ խանութները կարելի էր շատ լաւ յարմարեցնել բանջարեղէնների, պանրի, իւղի, մսի, թըխած հացի, մրգեղէնի և այլ մթերքների վաճառման համար։ Արծրունու քարվանսարան Թիֆլիսի կենտրոնի մէջ է և շատ յարմարութիւններ ունի։ Այդ շինութիւնը հեշտութեամբ կարելի է յարմարեցնել մթերանոցի համար և այդպիսի փոփոխութիւնները քաղաքից մեծ ծախսեր չէին պահանջի։ Փոփոխութիւնների մանրամասների վրա մենք չենք խօսում, որովհետև դա մասնագէտների գործ է, բայց այդ հարցին մենք ուրախութեամբ նորից կը դառնանք, երբ նա կը քննվի քաղաքային վարչութեան մէջ։

ԼՕՌՈՒ ԳԱՒԱՌԸ ԵՒ ՋԱԼԱԼ-ՕՂԼԻՆ

—

Ջալալօղլին հեռու է Մեծ-Ղարաքիլիսայից համարեա 35 վերստ տարածութեամբ՝ և գտնվում է վերջինիս հիւսիս-արևմտեան կողմը։ Այս երկու գիւղերը (շատերը սրանց քաղաքներ են կարծում) բաժանվում են միմեանցից «Դվալ» կոչված լեռնով, որը իր երկար ու ձիգ պտոյտներով ամեն մի անցորդի վրա անմոռանալի տպաւորութիւն է թողնում. այս լեռն է պատճառը, որ կաւորվի այդպիսի բարւոքման համար։ Ի հարկէ 100,000 բնակիչ ունեցող քաղաքին էժան չի նստի իր մթերանոցի կազմակերպելը։ Բայց եթէ անկարելի է վերաստեղծել և վերանորոգել դարերի ժառանգութիւնը, գոնեա ի՞նչի մի քանի քայլ չունենք այդ վերաստեղծմանը մօտենալու համար։ Ի՞նչի չը կազմել այդ մթերանոցը, օրինակի համար Արծրունու քարվանսարայում, որտեղ ահագին տեղ կայ, մեծ բակ, ջրանցք և անմաքրութիւնների համար խողովակներ։ Ներքին յարկի փոքրիկ խանութները կարելի էր շատ լաւ յարմարեցնել բանջարեղէնների, պանրի, իւղի, մսի, թըխած հացի, մրգեղէնի և այլ մթերքների վաճառման համար։ Արծրունու քարվանսարան Թիֆլիսի կենտրոնի մէջ է և շատ յարմարութիւններ ունի։ Այդ շինութիւնը հեշտութեամբ կարելի է յարմարեցնել մթերանոցի համար և այդպիսի փոփոխութիւնները քաղաքից մեծ ծախսեր չէին պահանջի։ Փոփոխութիւնների մանրամասների վրա մենք չենք խօսում, որովհետև դա մասնագէտների գործ է, բայց այդ հարցին մենք ուրախութեամբ նորից կը դառնանք, երբ նա կը քննվի քաղաքային վարչութեան մէջ։

Ջալալօղլին հեռու է Մեծ-Ղարաքիլիսայից համարեա 35 վերստ տարածութեամբ՝ և գտնվում է վերջինիս հիւսիս-արևմտեան կողմը։ Այս երկու գիւղերը (շատերը սրանց քաղաքներ են կարծում) բաժանվում են միմեանցից «Դվալ» կոչված լեռնով, որը իր երկար ու ձիգ պտոյտներով ամեն մի անցորդի վրա անմոռանալի տպաւորութիւն է թողնում. այս լեռն է պատճառը, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԻՆԿՈ ԲԱԼԱԲԱՆ

—

Անտարակոյս, գլխաւոր անձը այդ հասարակութեան մէջ էր Ֆրինկո Բալաբանը։

Ո՞ր հասակումն էր նա։ Ոչ ոք հաստատապէս ձեզ չէր կարող ասել այդ, բայց նա լաւ տղամարդ էր ոտքից ցգլուխ։ Մի այսպիսի մարդ չէր կարող աննկատելի մնալ, որպէս զինուորների շարքում և համայնքի մէջ, այնպէս էլ այստեղ, շինական պահապանների խարոյկի մօտ։ Կմնամնի գոյնով, բայց այժմ գոյնից զրկված քաֆթանը, գօտեորած սև մէջքակապով, վայելուչ կերպով սեղմված էր նրա իրանի վրա և մինչև վերը կոճկած էր. նրանց բոլորի մէջ նրա պարանոցը փաթաթած էր թաշկինակով. հին կապտագոյն անդրավարտիքը, որ շատ հաւանական է զինուորի լինէր, քաղաքացու ձեով ցած էր թողած կօշիկների վրա։ Գօտիից քարշ էր ընկած մի քսակ խոզի փամփուշտից, իսկ նրա մէջ երևում էր փոքրիկ չիբուխ և երկայն դանակ։ Նրա ընկերները զինված էին կալ կալսելու շղթաներով և մանգաղներով, բայց նրա ուսից քաշ էր ընկած միափողանի հրացան։ Կուրծքի վրա երևում էին երկու պատուանշաններ և մի ինչ-որ ժապաւէն։ Ոչխարի մորթուց կարված բարձր և կլորիկ գըլխարկը տալիս էր նրա գլխին բարբիի արժանատրութիւն և ենիչարիի վայրենութիւն, և ինչպէս գլխարկը, այնպէս էլ կարճ խուզած թուխ մազերը գեղեցիկ կերպով պսակում էին նրա երեսը, որ արտայայտիչ էր նրա բնաւորութեան։ Այդ երեսը զանազանվում էր իր փափուկ գծերով, նուրբ քթով և նուրբ բերանով, և մշտապէս բաց օդի մէջ գտնվելու պատճառով, ստացել էր պղնձի ախորժելի գոյն, որի ստուերը միախառնվելով բերանի տխուր գծերի հետ, և կախ ընկած բակենբարդներով, տալիս էին նրա բոլոր դէմքին մի առանձին տպաւորութիւն։ Նրա առաքինի աչքերը, տամուկ, կարծես թէ արտասուքով լի, խորին կերպով ընկղմած կարծր յօնքերի ներքոյ, նայում էին մի առանձին հանդարտ և գիտակցական նայուածքով, այնպէս, որ ազդում էին տրտմութիւն։ Իսկ ձայնը,—ձեր առջև կանգնած է մի այնպիսի ամրապինդ մարդ, զինուոր իր կատարեալ նշանակութեամբ, իսկ նրա ձայնի հնչիւնները լսելով, զուք զգում է.ք, որ ամեն ինչ խորտակված է նրա մէջ, և միայն ջարդուփշուր եղած հնչիւններ դուրս են հոսում նրա հզօր կուրծքից, իսկ նրա խօսքերի մէջ լսվում է մի ինչ որ միակերպ, բայց վսեմ բան։ Այսպէս խօսում էին քրիստոնէական նահատակները բոցավառ խարոյկների միջից կամ կրկէսի հրատապ աւազի վրա։

Այնտեղ կար և մի շուն, գիւղական հասարակ շուն, անորոշ գոյնով, թուխ զօլով վզի վրա և աղուէսանման փոքրիկ գլխով։ Նա քնած էր և սրածայր դունչը դրած ունէր առջևի թաթիկնեերի վրա, որոնց խրել էր ջերմ աւազի մէջ, և թեթև կերպով շարժում էր ականջները, երբ զինուորի տխուր ձայնը հասնում էր նրա ականջներին։

Բոլոր ներկայ գտնվողները խօսում էին կամաց և լուրջ կերպով, միայն հրէան զուրս էր տալիս, ինչ որ պատահում էր։

—Ես զտայ ձեզ համար մի նշանած,—ջղրացնում էր նա պաշտօնաթող զինուորին,—մի գեղեցիկ այրի կին։ Ես գիտեմ, որ զուք գնահատում էք կնոջ գեղեցկութիւնը. ճշմարիտ, լաւ կին է նա, բացի դրանից, նա ունի մեծ մնտեսութիւն, որը նոյնպէս վատ չէ։ Ի՞նչ կասէք։ Նա արդէն տեղեկութիւններ է հաւաքում ձեր մասին։

Նա հերթով նայում էր բոլորի վրա, որ նստած էին խարոյկի մօտ, բայց ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց նրա վրա։ Իսկ Լէյբը, երևի, ցանկութիւն ունէր չատախօսելու։ Նա փաղաքշաբար ձեռքը զարկում էր Բալաբանի մէջքին։—Ողորմած Աստուած, զուք միշտ չէ.ք կամենում ամուսնանալ,—զոչեց նա և նոյն միջոցին, աչքերից մէկը պլշացնելով, խորամանկութեամբ նայեց մուժիկների վրա։

—Նա երդվել է,—ախար այդպէս մարդ է,—երդվել է չամուսնանալ։

Զինուորը ուսի վրայից այնպէս նայեց դէպի նա, որ մեր հրէան հաղալով հեռացաւ սահնակի մօտ, ուր նստեց բազմոցի վրա, մէջքը դարձնելով դէպի մեզ։ Նա տատանում էր իր ոտները, ինչ-որ հաչիւներ էր անում, մրթ-մրթում էր իր ազօթքները և, վերջապէս, ընեց։ Իր կրունկներով սահնակի փայտին յանգով զարկելու ժամանակ, նա զարթեցրեց շանը։

—Լռիր, Լէյ,—ասաց Իւրկան։

Շունը նայեց զինուորի վրա և, տեսնելով, որ նա լուռ է, վերկացաւ, մօտեցաւ ինձ, և ձգձգելով իր ետևի թաթերը, սկսեց հոտոտել ինձ, յետոյ մօտեցաւ սահնակին և սկսեց հոտոտել ձիաներին։ Նրանք մտերմաբար խոնարհեցրին դէպի նրան իրանց գլուխները, իսկ նա բարձրացրեց դէպի նրանց իր դունչը, թափ տուեց ագին և ուրախ կերպով կաղկանձեց։ Հերթը հասաւ և հրէային. շունը հանդիսաւոր կերպով մօտեցաւ նրան, բայց իսկոյն շտապով վերադարձաւ իր առաջին տեղը, ուր կրկին խրվեցաւ տաք մոխիրների մէջ։

—Մի մարդ ձիւնի վրայով վազ է տալիս դէպի մեր կողմը,—անսպասելի կերպով ձայն արձակեց Մռայլը։ Մենք ամենքս նայեցինք դէպի այն կողմը, որ նա ցոյց տուեց, միայն զինուորը մնաց հանգիստ, որպէս էր։

—Այդ ո՞վ կարող է լինել,—ասաց նա փոքր ինչ անցնելուց յետոյ և, գլուխը չուռ տալով, իսկոյն ժպտաց։—Միթէ զուք չէք ճանաչում նրան։

—Ա՛խ, ախար դա Կօլանկօն է,—ասաց այդ ժամանակ Թղթէ մարդը իր ողորմելի ձայնով։

—Հէնց նա էր պակաս,—նկատեց խորամանկ Իւրկան, մի առանձին վեհութեամբ խաչելով ձեռքերը կուրծքի վրա։

Զինուորը արհամարհանքով շարժեց ձեռքը և իսկոյն դարձաւ դէպի ինձ։

—Զուք պէտք է գիտենաք, պարոն,—լրջօրէն ասաց նա,—որ զուք շուտով կը տեսնէ.ք մի ծերունու, որի հարիւր տարին վաղուց անցել է,—երևելի մարդ է, փորձված, խելացի մարդ է, միայն փոքր ինչ չատախօս է, ծերութիւնից սկսել է երեխայ դառնալ. երբեմն ծիծաղում է, երբեմն առանց պատճառի լաց է լինում։ Այդ բոլորը շատ բնական է, երբ մարդ ապրում է այդքան տարի։

այս երկու հարեան գիւղացիք բնականից շատ քիչ հաղորդակցութիւն ունեն միմեանց հետ: «Դըվալ» լեռան հիւսիսային կողմը Լօռու գաւառն է, իսկ հարաւային կողմը Փամբակու գաւառը: Ցիշեալ լեռը մի բարձրադագաթ լեռ է, որի կատարից երևում են իրանց սքանչելի-անտառային տեսարաններով Լօռու և Փամբակի գաւառները: Վճիտ ջրեր, պարզ և մաքուր օդ, գեղեցիկ տեսարաններ լեռների և դաշտերի,—բնութեան այս պարգևները առատ կերպով թաղաւորում են Լօռու և Փամբակի գաւառներում: Գարնան ժամանակները, սրանք ամենքը իրանց հիանալի պատկերներով մարդու վրա մի առանձին տպաւորութիւն են թողնում. արժէ ամառները այդ կանաչազարդ և ծառաչատ տեղերում կեանք անցկացնել:

Լօռեցիք, ընդհանուր առմամբ, բոլորը (բացի Ջալալօղլեցիներից) պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ. երկրագործութիւնից յետոյ, անասնապահութիւնը սրանց համար երկրորդ տեղն է բռնում՝ (իրաւամբ այդպէս և պէտք է լինէր) և սրան նպաստողը արօտատեղին է, որը լօռեցւոց համար բաւականին ընդարձակ է: Բայց առհասարակ շատ քիչ տեղեակ լինելով սոյն գաւառի ընդհանուր տեսութիւնից և չը շեղվել կամենալով բուն խնդրից՝ մասնաւորում եմ խօսքս միայն Ջալալօղլու վերաբերութեամբ:

Արդէն շատերին յայտնի է, որ Ջալալօղլին, որպէս մի կենտրօնատեղի, մեծ պարտականութիւններ ունի իր վրա ստանձնած. այո՛ ունի, և այդ պարտականութիւնները կատարելով, նա օրինակ պէտք է լինի իր շրջակայ գիւղերին. սակայն կատարո՞ւմ է կամ ցանկանո՞ւմ է կատարել, սրա համար մի փոքր համբերութիւն եմ խնդրում ընթերցողից: Սակայն նախ քան սրա ներքին երևոյթների վրա խօսելը, առ այժմ խօսում եմ արտաքին կողմերի վրա:

Ջալալօղլին ունի բաւական մեծ տարածութեամբ վարելահողեր և արօտատեղեր, սակայն այս գիւղացիք ո՛չ մի տարի երկրագործութեամբ չեն պարապել, այլ դրանց դաշտերի մատուցած ծառայութիւնը միայն խոտ արտադրելու կողմից է եղել. բայց ներկայ տարիների «քեսաութիւնը» դրանց մի քանի ընտանիքներին ևս ստիպել է երկրագործութեամբ պարապել: Այս տարի բաւականի վար ու ցանք էին արել, և բացի դրանից սկսել էին «խամ» մնացած տեղերը ևս սեացնել դութանով: Մոռացայ ասել, որ սրանց դաշտերը (նոյնպէս Լօռու ամբողջ գաւառը) իրանց արգաւանդ և բերրի յատկութիւններով, մեր միւս գաւառների վարելահողերից չեն տարբերվում. սրա ապացոյցն այն է, որ վերջին տարիներում սրանք (լօռեցիք) հացի պակասութիւն չեն տեսել, այն ինչ մեր-Փամբակի գիւղացիները չը բաւականանալով իրանց սերմանածից, ստիպված էին լինում իրանց ձմեռվայ ապրուստը Շիրակի գաւառից լրացնել: Իսկ Ջալալօղլեցիք, որ այժմ սկսել են պարապել երկրագործութեամբ, այդ ո՛չ թէ նրանից է, որ ըսկսել են խելքի գալ կամ ձգտումն ունենալ դէպի այդ գեղեցիկ պարապմունքը, ո՛չ. այլ առատուրը բոլորովին ընկած լինելով, յուսահատված լինելով սրա բացակայութիւնից և միջոց չունենալով կենսական պարէնը գնելու, այժմ իրենք իրենց են սկսել հայթայթելու այդ ամենօրեայ պահանջը. բայց եթէ մի ամենափոքր առատրի ասպարէզ լոյս ընկնի, նրանք պատրաստ են իսկոյն թողնել այդ գեղեցիկ արհեստը:

Ասացինք, որ Ջալալօղլին շատ հարուստ է դաշտերի, արօտատեղիների և անտառախիտ լեռների կողմից: Ընդհանրապէս սա իր բնական գեղեցկութեամբ և առողջարար կլիմայով շատ յարմարութիւններ ունի բնակիչների համար. սակայն ցաւելով պէտք է ասենք, որ բնութեան յիշեալ պարգևների հետ պակասում է տեղացիներին մի զգալի և աչքի ընկնող պահանջ,—այդ ջրի բացակայութիւնն է, որը շատ է մտածել տալիս տեղացիներին: Թէև գիւղն կից, հիւսիսային կողմի ձորի միջով անցնում է մի մեծ գետ, բայց այդ ձորը իր անվերջ շարունակութեամբ մի ահագին անդունդ լինելով, դաշտերին և պարտէզներին անհնարին է օգտվել դրանից: Այդ ջուրը ծառայում է գլխաւորապէս բնակիչների ջրաղացներին և անասուններին, իսկ տեղացիների գործածական ջուրը գիւղում գտնված մի երկու աղբիւրներն են մատակարարում: Չուրն է պատճառը, որ այսօր հարիւրաւոր պարտէզներ անխնամութեան գիրկը մատնվելով, բոլորովին չորացած, ամայի են դարձած. շատերը ցանկանում են իրանց ընդարձակ տեղերի վրա այգիներ և պարտէզներ կանգնեցնել, բայց ջրի սակաւութիւնը արգելք է լինում դրանց իրագործման, իսկ մի քանի եղածներն էլ արդէն թառամելու բաղդին են ենթարկված: Գիւղի հարաւ արևմտեան կողմից վազում է մի փոքրիկ առուակ, որը գիւղից հազիւ մէկ վերստ հեռաւորութիւն ունի, սակայն գիւղին օգուտ տալու համար սա ևս իր անյարմարութիւններն ունի: Բայց պէտք է խոստովանել, որ այս հանդամանքում ևս փայլում է տեղացւոց անհոգութիւնը, որովհետև սրանք եթէ մտածում լինէին իրանց եւրոպական ճաշակով չինած տների հայթայթները ծառերով և ծաղիկներով զարդարել, թէև դժուարութեամբ, այնու ամենայնիւ, յիշեալ առուակը կարող էին իրանց պարտէզներին ծառայեցնել: Իմ կարծիքով, սրան գիւղի միջով տանելու համար մեծ ծախս և մեծ դժուարութիւն հարկաւոր չէր. բաւական էր եթէ համաձայնութիւն կայանար ժողովրդի մէջ:

Մի հանդամանք Ջալալօղլեցիներին շատ է մտածել տալիս. այդ այն է, որ Ջալալօղլին մի անկիւն ընկած լինելով, բոլորովին կտրված է գլխաւոր հաղորդակցութիւններից, և ինչպէս երևում է, կարծես թէ բաղդը ո՛չ մի ուրախառիթ ապագայ չէ խոստանում: Ջալալօղլին եթէ ունենար այն հաղորդակցութիւնը, որպիսին ունի Ղարաքիլիսան, (վերջինս Թիֆլիսի, Երևանի և Ալէքսանդրապօլու խճուղիների հետ կապված է. հաստատում են, որ շուտով երկաթուղին ևս սրա միջով կը բացվի) շատ շուտով նա կը բարձրանար:

Ջալալօղլեցւոց առևտրի գլխաւոր աղբիւրը տեղիս գինուորներն են կազմում. բայց նրանք էլ տեղացւոց կոյր բաղդից, կառավարութեան հրամանով այստեղ և այնտեղ են գնում. ուրեմն սրանից հետևացնելու է, որ մի երկու տարուց յետոյ խանութների մեծ մասը կը փակվի: Այստեղ պէտք է խոստովանել, որ այս գիւղում որքան տուն կայ, համարեա թէ այնքան էլ խանութ կայ. ով մի քանի կոպէկ է ունեցել, նա իր համար միկիտանի կամ մի այլ առևտրի խանութ է բացել. իսկ այսօր առևտրի չգոյութիւնից խանութի մէջ եղած կապիտալը սպառվելու վտանգին է ենթարկված: Առհասարակ թէ սրանց և թէ մեր բոլոր խանութպանների պարապմունքները «ճանճ» որսալն է, ամեն օր մի որ և է «մուշտարու» սպասելով քնում են. ներկայ հանդամանքներում սրանց վիճակն էլ անտանելի է:

Ինձ հետ շատերը կը զարմանային, թէ ինչպէս Ջալալօղլու այն երկսեռ դպրոցները, որոնք 12,000 ր. դրամագլուխ ունէին, յանկարծ մնանկութեան բաղդին դատապարտվեցան, և որովհետև իմ այնտեղ եղած ժամանակը բոլորը տեղեկացել եմ, ուստի փոքր ինչ համբերեցէք՝ բաւականութիւն ստանալու համար:

Պատերազմից յետոյ, երբ ամենքը իրանց մի քանի հարիւրներով հրապուրված, իւրաքանչիւրը իր երջանկութիւնը դրանց մէջն էր փնտռում, ուրախութեան այդ բաղդաւոր րոպէներում, դրանց մտքում ծնվում է ուսումնարանների համար դրամագլուխ կազմելու ցանկութիւնը: Ամենքը ուրախութեամբ վերաբերվելով այդ նպատակին՝ նրանցից իւրաքանչիւրը ըստ չափու կարողութեան ձրգում է իր լուման հասարակութեան դանձանակի մէջ. սակայն նրանցից շատերը, այն ևս մեծ գումար ստորագրողներից, դրամի փոխանակ մուրհակ են տալիս փողը որպէս ապահով տեղ մնալու և տոկոս բերելու համար: Հողաբարձուները դպրոցները հանդիսաւոր կերպով բացում են. ժողոված փողից հանդիսի համար անում են մի քանի աւելորդ ծախսեր, գնում են մի փողարկղ 150 մանէթով, որոշում են աշակերտների թոշակները 15—25 ր. (15-ը միջակ դասի աշակերտից, իսկ 25—հարուստ. մեր մէջ տարօրինակ բան) որով և սկսում են ուսումը: Բայց մի որոշ ժամանակից յետոյ, հոգաբարձուները ուսուցիչներին ռոճիկ տալու համար չը կարողանալով ստանալ աշակերտների ծնողներից իրանց որդկերանց թոշակադրամը, ստիպված են լինում դրամագլխից վճարել. այսպիսով մի քանի ժամանակից յետոյ, պատրաստի դրամագլխի մի մասը բոլորովին ըսպառվում է: Սակայն այստեղ հարկաւոր է աւելացնել և այն հանդամանքը, որ մի երկու տարուց յետոյ ներկայ առևտրի սովը իր անդութ թևերը սփռելով ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Ջալալօղլում, այս անակնկալ դիպուածի չնորհիւ շատերի հետ մնանկանում են և այն անձինքը, որոնք հոգաբարձութեանը փողի տեղ մուրհակներ էին տուել, ըստ որում անկարող են լինում վճարել թէ դրամագլուխը և թէ տոկոսը: Ահա և այս պատճառով փակվում է երկսեռ դպրոցների յարատևութիւնը: Այս տխուր իրողութիւններից յետոյ, լսում ենք, որ տղայոց դպրոցը դարձեալ բացվել է և կաղ ի կաղ ընթանում է. եթէ ճըշմարիտ լինէր սա, շատ ուրախ կը լինէինք, որովհետև, ինչպէս վերը յիշեցինք, Ջալալօղլին բազմաթիւ գիւղերի կենտրոն լինելով, վերջինիս ուսումնարանները մեծ ծառայութիւններ կարող էին անել իրան շրջապատող հարևան բնակիչներին:

Ջալալօղլին չունի մի երկու անվեհեր ձեռքեր (որպիսին ունի Ղարաքիլիսան—տէր-Արսէնը և տէր-Խորէնը) որոնք կարողանային առանց նուսակցական ոգու առաջնորդել նրան խաւարից դէպի լոյս: Կան մի քանի մարդիկ, որոնք ունեն բնական խելք, ձիրք, դատողութիւն, ընդունակութիւն գործելու և հեղինակութիւն ստանալու, սակայն անհամերաշխութիւնը, կոյր, նախանձը և փառամոլութիւնը արմատացած լինելով սրանց մէջ, առիթ է եղել սրանց անջատման. այժմ իւրաքանչիւրը իր «քսակի» համար է մտածում: Միայն մի պարոն, որ յիշեալ խելօք և հասկացող անձինքներից մէկն է, (պ. Սարդ. Տէր-Գրիգորեանց) և որ ջերմ ցանկացող է դպրոցների յարատևութեան, ամեն կերպ աշխատել է վերջինիս և գիւղի բարեկարգութեան համար: Բայց տեսնելով որ ոչ ոք իրան աջակից լինել չէ ցանկանում, և համոզված լինելով, որ «մէկ ձեռքը ծափ չի տալ», սա ևս այժմ մի անկիւն քաշված՝ վայելում է իր հանգիստը: Ցիշեալ պարոնն էր, որ իր տանուտէրութեան ժամանակ անգործ և թափառաշրջիկ երիտասարդների մէջ ընթերցասիրութիւնը տարածելու համար, հիմնեց հասարակաց ընթերցարան, բերել տալով շինական դատարանի անունով զանազան վիպական գրքեր և բոլոր պարզուկական հրատարակութիւնները. բայց որովհետև

Այդ միջոցին մօտեցաւ և ինքը Կօլանկօն և ազատեց Բալաբանին երկար բացատրութիւններ տալուց: Դա մի փոքրիկ և ժիր արարած էր դողդոջուն ձեռքերով ու ոտներով, ներս ընկած կուրծքով, ցամաքած, դեղնագոյն վզով, զառամեալ նոյնպէս դեղին երեսով, որի վրա կեանքի նշոյլը երևում էր միայն փոքրիկ մոխրագոյն աչքերում, որոնք խորին կերպով ընկղմված էին իրանց բոյների մէջ. դրանով աւելի սուր կերպով միջամուխ էին լինում նրանք ձեր մէջ, և կարծես, կամենում էին ծծել ձեզ: Նրա ոտները կրում էին լաւ կօշիկներ և տաք անդրավարտիք, մարմնի վրա հագած ունէր տաք, թէև իւղոտած թուլուպ. գլխին դրած ունէր կատուի մորթուց գլակ, իսկ ձեռքերով բռնած ունէր, որպէս մի տղայի, կարմիր զօլ-զօլ բարձ, և իր անատամ բերանով այնքան արագ էր խօսում, որ դժուար էր լինում ջոկել նրա խօսքերը:

—Հիմա ես գնայ ռեխներին,—ամենից առաջ խնդալով աղաղակեց նա, յետոյ սկսեց դանդատվել, բայց թէ իսկապէս ինչ բանի վրա, դըժուար էր հասկանալ, իսկ վերջը սկսեց գովել Բալաբանին:

Նա նստեց նրա մօտ և յետոյ հերթով մտիկ տուեց ներկայ գտնվողների ամեն մէկի երեսին. երբ հերթը հասաւ ինձ, նա պարզեց իր ներս ընկած վիզը, բարձրացրեց յօնքերը, վեր կացաւ և երեք անգամ գլուխ տուեց ինձ:

—Ողորմած պարոնը դժուար թէ կը գիտենայ, թէ ինչ պէտք է անել ինձ հետ,—խնդալով ասաց նա և դարձեալ կուլ տուեց մի քանի խօսքեր:—Դուք տեսնում էք ձեր առջև մի ծերունու, որը իր բոլոր մերձաւորներից աւելի երկար է ապրել: Հիմա ես մնացել եմ միայնակ, ինչպէս մի տղայ մօր արգանդում: Անցեալ տարի ես դեռ ևս ունէի մի հին քաւթառ, և յոյս ունէի, որ գոնէ այդ բարեկամս կը թաղէ ինձ, բայց ինձ վիճակվեցաւ նրան էլ ծածկել խոնաւ հողի տակ: Այժմ իմ խրճիթում չը կայ մի ուրիշ կենդանի արարած բացի ինձանից: Ո՞վ կը համաձայնվի ապրել ինձ նման ծերուկի հետ:—Այդ բաւական չէ, ես ամենևին քնել չեմ կարողանում: Դրան սովորում ես, նոյն չափով, որքան ծերանում ես: Բայց երբ չես քնում, այդ ժամանակ շատ բաներ են անցկենում գլխիցը: Եւ այդ պատճառով գիշերը ես վախենում եմ մնալ միայնակ, այո՛, այո՛, վախենում եմ... (նա այնպէս ծիծաղեց, որ քթի մէջ օդը սուլել սկսեց):—Ցանկարծ ինձ այնպէս է թւում, թէ մառախուղը ոտներ ունի, իսկ ձիւնը ձեռներ, և թէ երկուսն էլ բաղխում են իմ լուսամուտը կամ դռները. իսկ լուսինը երես ու աչքեր ունի, մեծ աչքեր, ինչպէս խելագարներն ունեն, և այդ յիմարը տալիս է ինձ այնպիսի հարցեր, որ չես իմանում, թէ ինչ պէտք է պատասխանես նրա խենթութիւններին:

Նա թքեց դէպի միւս կողմը:

—Ցեսնում էք, ահա ես էլ շտապում եմ դուրս փախչել իմ տնակից և վազ եմ տալիս այնտեղ, ուր գիտեմ, որ կը հանդիպեմ մարդիկների:

Ծերունին հեռաքրքրեց ինձ:

—Իսկ մարդիկների մէջ դուք ձեզ լա՞ւ էք ըզդում, հարցրի ես:

—Ձշմարիտն ասեմ ձեզ, ես երբեմն ձանձրանում եմ նրանցից:

Թղթէ մարդը տհաճութեամբ նայեց նրա վրա:

—Կարծեմ, ես վիրաւորական ոչինչ չասեցի,— շարունակեց ծերունին,—բայց չը կայ մի այնպիսի բան, որը ես լսած չը լինէի առաջուց: Ես ամեն ինչ գիտեմ, բոլորովին ամենը: Եւ եթէ պատահում է մի որ և է նորութիւն, դրանում ինչ մի զարմանալի բան կայ, թէ Մարտիրոսը փոքր ինչ յիմար կերպով վարվեց, քան թէ Կիրակոսը, երբ որ նա ցանկացաւ հրապուրել իր բարեկամի կնոջ: Դուք նորելուկներ էք, ձեզ ամեն ինչ զարմացնում է, իսկ իմ աչքը ամեն բանից կշտացել է: Բալաբանը միակ մարդն է, որին արժէ լսել. ես էլ դրա համար վազեցի խարոյկի մօտ, գիտենալով, որ նա անպատճառ այստեղ կը լինի:

—Ուրեմն ձեզ ձանձրացրել է կեանքը, մի առանձին հետաքրքրութեամբ հարցրի նրանից:

—Ի՞ հարկէ:

—Եւ դուք կը ցանկանայիք մեռնել:

—Իսկական մահով:—Այո՛:

—Ի՞նչ էք կոչում դուք իսկական մահ:

—Մի մահ, որ միշտապէս կը ոչնչացնէ մարդուն, և ոչ այն մահը, որ տալիս է նրան հանգստանալ գերեզմանի մէջ, իսկ յետոյ ստիպում է նրան հաւաքել իր անդամները, և հրամայում է նորից ապրել:

—Նա վախենում է յաւիտենական կեանքից,—բացատրեց թղթէ մարդը, գլուխը խոնարհեցնելով դէպի իմ կողմը:

Մենք ամենքս նայեցինք ծերունու վրա: Ես հետաքրքիր եղայ լսել նրան, որովհետև մեր գիւղացիները, ոչ մի անգամ գրքի մէջ չը նայելով և կարդալ-գրել չը գիտենալով հանդերձ, լինում են ընածին քաղաքագէտներ և փիլիսոփաներ: Նրանց մէջ կայ մի և նոյն արևելեան իմաստութիւնը, որը գտնվում է «Հազար ու մէկ գիշերների» աղքատ ձկնորսների, հովիւների և մուրացկանների մէջ, որոնց մօտ մտնում էր հռչակաւոր Հարուն-ալ-Ռաշիդը: Ես սպասում էի լսել մի այնպիսի բան, ինչ որ չէ պատահում լսել ամեն օր, և որը չես գտնի ոչ Հեգէլի և ոչ Մօլեշօտի մէջ:

—Իսկապէս ինչ է տալիս մեզ այդ կեանքը,—հանդարտ և պարզ կերպով խօսեց Կօլանկօն:

—Դուք նորելուկներդ, ջահիլ մարդիկ էք, զարմանալի չէ, որ վազ էք տալիս կեանքի ետևից, բայց մի ծերունի, ինչպէս ես, ամեն ինչ տեսած, ամեն ինչ փորձած, ամեն տանջանք կրած, ինչ որ կարող է միայն կրել մարդը,—նա ի հարկէ...—Նա ընկաւ խորին մտածութեան մէջ:

—Յաւիտենական կեանքը պէտք է որ սարսափելի ձանձրալի լինի,—ասաց նա փոքր ինչ լռելուց յետոյ,—բայց ես գիտեմ մի ուրիշ բան, որը ինձ թւում էր աւելի սարսափելի:

—Ի՞նչ բան:

—Վերատին ծնունդը:—Նա բարձր ձայնով ծիծաղեց:

—Այդ դեռ իմ գլխում չէր եկել,—զգուշութեամբ նկատեց թղթէ մարդը,—բայց ծերունին իրաւ որ ուղիղ է ասում:

Բալաբանը նայում էր կրակի վրա, նրա աչքերը պաղել էին, ինչպէս սառած մարդու աչքեր: Կօլանկօն արմուկով խթեց նրան:

—Իսկ դու ինչ կասես այդ մասին, հարցրեց նրանից:

—Ասուած հեռու պահի,—լուրջ կերպով պատասխանեց Բալաբանը,—ես չեմ կամենում վերատին ծնվել:

(Կը շարունակվի)

մէջ տեղը «Եւ-ի» խնդիր կար, և երիտասարդութիւնը սիրում է քէֆեր անել, այդ պատճառով էլ պարոնի բազմաթիւ ցանկութեանց հետ դա ևս իր որբանի մէջ խեղդվեց։—Սակայն Ջալալօղլու երկու քահանաների մասին ասելոդ է երկու խօսք ասել, գոհ կը լինէինք եթէ նրանք կարողանային մեր կրօնական օրինակատարութիւնները սրբութեամբ կատարել։

Ջալալօղլու երիտասարդութիւնը, ցաւելով պէտք է ասեմ, որ մի բացառիկ ընթացք է բռնած մեր ներկայ հայ երիտասարդութեան մէջ։ Նրանք ընդունակ չեն հետաքրքրվել ժամանակումս «պահանջ» դարձած ոչ մի նոր երևոյթով։ Ընթերցանութեամբ պարապել, լրագիրներ կարդալ, խօսել, դատել, վիճել, սրանցից ոչ մէկը նրանց մէջ գոյութիւն չունի. զուք եթէ տեսնէք նրանց մէկ տեղ խմբված, անպատճառ հաւատացած եղէք, որ նրանց խօսակցութեան առարկան ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի որ և է կատարած անկարգութիւն. խանութների դռները սև նաւթով ապականել, դռների կամ պատերի վրա կեղտոտ բառեր գրել, աշխատել մի որ և է թշնամու տունը այրել, օրիորդներին կեղտոտ նամակներ գրել, ահա դրանց առօրեայ զբաղմունքները։ Այն էլ հարկաւոր է ասել, որ այսպիսի անկարգութիւն անողները գլուղի «պատուաւոր» համարված պարոնների՝ եւրոպական ճաշակով հագնված որդիներն են։ Այս այսպէս լինելով, մէկը, եթէ սրանց բարոյական ճանապարհի վրա տեսնելը ցանկանալով, լրագրութեան մէջ այս անկարգութիւնը հրապարակ է հանում, էլ նա պըրծաւ. փոխանակ թղթակցից և լրագրից գոհ լինելու, որ իրանց ցոյց են տալիս ուղիղ ճանապարհը և առաջնորդում են դէպի բարոյականութիւնը, ինչ անվայել խօսքեր, փողոցային հայհոյանքներ և ուշունցներ ասէք, որ չեն թափում նրանց գլխին։ Իսկ ինչ են անում նրանց ծնողները,—ոչինչ. նրանք հեռուից անտարբեր աչքով նայում են այս ամենի վրա. և ինչ պէտք է անեն, մինչդեռ իրանք են միջոց տուել իրանց զաւակներին այսպէս լինելու։ Ես շատ ծնողներ եմ տեսել, որոնք իրանց ընտանիքի մէջ, որդկերանց մօտ այսպիսի կեղտոտ խօսքեր են խօսում, որ մի որ և է զգայուն ականջ լսելիս կը զզուի։

Ջալալօղլեցուց նիստ ու կացը շատ գեղեցիկ է. նրանք ամենքը, առանց բացառութեան, շատ մաքուր են ապրում. ամեն ոք իր չափով, կահ-կարասիքով զարդարել է իր տունը. հիւրասիրութեան մէջ նոյնպէս գերազանց են, սակայն հագնվելու ձևերի մէջ փայլում է նոցա չռայլասիրութիւնը. ամենքն էլ սիրում են նորնոր հագուստներ ունենալ, առանց ունեցածը հնանալու. իւրաքանչիւր հանդիսի համար նոքա ունեն պատշաճաւորը։ Առհասարակ «մօդայասիրութիւնը» այստեղ ևս իր հետևողները ունի, իսկ առանց բացառութեան ոչինչ չը կայ։

Միք. Տէր-Յարութիւնեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 հոկտեմբերի

«Մշակ» լրագրիդ անցեալ 118 համարում խօսելով մեր վաճառականների առևտրի ընկած դրութեան մասին, այժմ էլ հարկաւոր եմ համարում մի քանի խօսք ասել մասնաւորապէս Թիֆլիսի վաճառականների հաշուապահութեան վերաբերմամբ։

Ոչ մի լուսաւորված երկրի վաճառականները այնքան յետ չեն մնացել վաճառականական ասպարիզում հաշուապահութեան մէջ, որքան Թիֆլիսում հայ վաճառականները։ Հաշուապահութիւն ասած բառը՝ Թիֆլիսի վաճառականների մէջ շատ հազուագիւտ բան է, որից միշտ խուսափում են մեր վաճառականները։ Ճշմարիտ է, որ Թիֆլիսում կան մի քանի վաճառականներ, որոնք պահում են հմուտ հաշուապահներ, բայց ի հարկէ, իմ խօսքը այստեղ մեծամասնութեան վրա է. ինչպէս էլ ասում է յայտնի առածը, «մի ծաղիկով գարուն չի լինի»։

Եթէ ընդհանուր հայեացք ձգենք այժմեան վաճառականների հաշուապահութեան վրա, այն ժամանակ կը հանենք այն պարզ եզրակացութեանը, որ բոլոր վաճառականները փոխանակ աշխատելու ժամանակի հանգամանքներին համեմատ փոփոխել իրանց վաճառականական գործունէութեան ձևերը, փոխանակ աշխատելու մտցնել վաճառականութեան մէջ եւրոպական մեթոդիկայով ընդհանուր հաշուապահութիւն (բուխգալտերիա), վերջապէս փոխանակ աշխատելու մրցել մեզանից լուսաւորված ազգերի հետ և առաջ գընալ կեանքի ասպարիզում, մեր յարգելի վաճառականները հակառակ կերպով են վարվում, յետ են գնում, նախապաշարմունքներ ունեն և ամենքան միայն սպասում են Աստուածանից։

Եթէ օտար երկրների արհեստաւորները մինչև անգամ ունեն առանձին հաշուապահներ, մինչ Թիֆլիսի հայ վաճառականները, որոնք յիշվում են Մոսկվայի առևտրականներ, որոնք հազարներով ռիսկի տակ են մտնում, չը պէտք է ունենան առանձնապէս հաշուապահներ ու կանոնաւոր գրված հաշուամատեաններ, որոնց միջոցով ամեն ժամանակ կարողանան իմանալ առևտրի ընթացքում իրանց կրած վնասը, ստացած օգուտը, և ոչ թէ ճարպիկութեամբ ու բաղդի բերմունքով շարունակեն իրանց գործերը և պատահական միջոցներով երբեմն հարստանան, երբեմն էլ մնանկանան։

Բայց Թիֆլիսի վաճառականները կարծես թէ երդվել են երբէք չը թողնել այն միջնադարեան հաշուապահութիւնը (Աստուած հաշուապահութիւն համարի), որի հետ միանգամայն նրանք ընտելացել են, որովհետև մեր վաճառականների գաղափարով, վաճառականութեան մէջ ասելի օգտաւէտ է ճարպիկ լինելը, քան թէ հաշուագէտ։ Եւ ինչ էք կարծում. այն մարդիկը, որոնք վաճառականութեան մէջ ճարպիկ են, ահագին ռոճիկներով՝ ձեռքից ձեռք են անցնում։ Երևակայեցէք, որ մի նախչևանցի պարոն, որ մի քանի տարի սրանից առաջ մէյդանի բեռնակիր մշակ էր, իսկ այսօր, այդ պարոնը մի ազգայի գլխաւոր գործակատար է, մինչև անգամ նրա կալուածների էլ կառավարիչ է, որովհետև սարսափելի ճարպիկ է ու խաբեբայ։ Բայց պէտք է պարոններ վաճառականները գտնեա կեանքի փորձերից զգուշանան և տեսնեն, թէ որ և իցէ վաճառական որքան էլ ճարպիկ է եղել և ճարպիկութեամբ հարստութիւն է դիզել, սակայն եթէ նա կանոնաւոր հաշիւ չէ ունեցել իր առևտրական գործէունութեան մէջ, նրա հարստութիւնը երկար չէ տեւել, ինչպէս էլ տաճկերէն առածը ասում է, «քամին բերել է և քամին էլ տարել է»։ Օրինակները շատ են, որոնցից մի քանիսը կը յիշենք այստեղ իբրև փաստ, մեր ասածները ապացուցանելու համար։

Մի քանի տարի սրանից առաջ, Թիֆլիսի յայտնի կապիտալիստ մի վաճառական մանուֆակտուրայի առևտուր էր անում, և ամեն օր անընդհատ Մոսկվայից հակերով ապրանքներ էր ըստանում. այդ պարոնը միշտ խնայում էր մի քանի հարիւր ռուբլի վարձ վճարել մի հմուտ հաշուապահի, որպէս զի կարողանար կանոնաւոր կերպով պահել իր ամբողջ հաշիւները, այլ վստահ լինելով իր ճարպիկութեան վրա, ամեն գործ կատարում էր իր ձեռքով (միայն մի քանի փոքրիկ գործակատարներ ունէր). համ ծախում էր, համ հաշում էր, համ գրում էր, համ էլ ծախածի փողերը իսկոյն և եթ համրիչի վրա հաշուելով, ստանում էր. միով բանիւ, այդ պարոնը, մի ձեռքով չորս ձմերուկ էր բռնում, և այդպիսի նահապետական ուղղութիւնով տարիների ընթացքում շարունակում էր իր առևտրական գործերի շրջանը (оборотъ)։ Բայց եթէ պարոն վաճառականի խանութից միշտ հազարներով ապրանք էր պակասում, և դրամարկղից ամեն օր փող էին յափշտակում, այդ նրա համար ոչինչ նշանակութիւն չունէր, քանի որ ամեն բան գաղտնի էր, քանի որ պարոնը իր գործերը ղեկավարում էր իր բնական յիշողութեամբ ու բնազդումով։ Եւ անցաւ մի քանի ժամանակ, պարոն վաճառականը փառաւոր կերպով մնանկացաւ։ Նա չարաչար աշխատեց ճարպիկութեամբ մեծ հարստութիւն դիզել, բայց ընդհակառակը, ունեցածն էլ կորցրեց ու իրան դժբաղդութեան վերջին կէտին հասցրեց։

Դարձեալ մի օրինակ։ Մի երիտասարդ վաճառական էլ, որ զեռ չը ծաղկած անդուրեղ ճակատագրից շուտով թառամեց, նոյն դրութեան հասաւ։ Այս պարոնն էլ մի ձեռքով Մոսկվայում առնում էր, իսկ միւս ձեռքով, անհաշիւ կերպով, Թիֆլիսում ծախում։ Օրինակ՝ այս պարոնը Մոսկվայում առնում էր Բարանովի չիթը 18 կ., իսկ Թիֆլիսում ծախում էր 16 կ.։ Լոդձայում Շայիրլէրի կտաւը առնում էր 10 կ., իսկ Թիֆլիսում ծախում էր $8^1/_2$ կ., և այդպէս անգիտակցաբար շարունակում էր իր արարքը։ Անցաւ մի տարի. մի օր յանկարծ մեր ջենտըլմէն վաճառականը հաշուեց իր խանութը, և որքան էր սրա զարմանքը, երբ դուքանի ապրանքը ստուգելուց յետոյ, իմացաւ որ բացի իր 8000 ր. դրամագլխից, որ հայրական ժառանգութիւն էր, 6800 ր. էլ պարքի մէջ է ընկել։ Իսկոյն համբաւը ամբողջ քաղաքը տարածվեց, գործի անիւները փչրվեց, նոյն օրը գողութեան մէջ պատրաստակ բռնելով՝ իր չորս գործակատարներին էլ արձակեց, մի շաբթից յետոյ դուքանի դռները փակեց ու ինքն իրան՝ ն ա ն ա ն կ հռչակեց։ Այսպիսի պատկերներ կարող ենք հազարներով դուրս բերել վաճառականական կեանքից, սակայն առ այժմ թող մեր յարգելի վաճառականները հաւատացած լինեն, որ ոչ մի հասարակութեան մէջ առաջ չի գնայ այն գործը, եթէ նրա մէջ չը կայ կատարեալ հաշիւ ու հաշուակշիռ։ Միւս անգամ կը գրեմ գործակատարների վրա։

Ա. Մելիք—Այվազեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times» լրագիրը հաղորդում է, թէ բէլգիական մինիստրութեան «Echo du Parlement» լրագիրը բէլգիական թագաւորի վերջին ճանապարհորդութիւնը Հոլանդիա համարում է այդ երկու պետութիւնների համաձայնութեան գրաւական։ Ամստերդամի «Tageblatt» լրագիրը հերքում է այդ երկու պետութիւնների մէջ քաղաքական դաշնակցութեան հաստատման կարելութիւնը։ Այդ դաշնակցութիւնը կը պարտաւորէ հոլանդական զօրքերին պաշտպանել Բելգիայի սահմանները, եթէ Ֆրանսիան վերջինի վրա յարձակվի։ Եթէ քաղաքականութիւնը չը լինէր, ասում է «Tageblatt» լրագիրը, Հոլանդիան սրանց կը կանչէր. «Կեցցէ Բելգիա»։

—Հռոմի կղերական լրագիրները տպել են հետեւեալ ստատիստիկական տեղեկութիւնները եղուիտական ընկերութեան մասին. «ընկերութիւնը բաժանվում է հինգ գլխաւոր մասերի՝ 1) Իտալիա և իտալական կղզիները, որոնք ունեն 1558 եղուիտ արեղաներ, 2) Գերմանիա, Աւստրո-Ունգարիա, Բելգիա և Հոլանդիա—2165, 3) Ֆրանսիա և նրա գաղթատեղիները—2765, 4) Սպանիա և Մեկսիկա—1933, 5) Անգլիա և Ամերիկան Միացեալ Նահանգներ 1895։ Այդ հինգ թուանշանները միասին կազմում են 10349։ 1870 թուականին Լոյոլաի բոլոր աշակերտների թիւը 10,529 էր, 1880 թուին—10,494, 1881 թուին 10,798 և 1882 թուին 11,058։

—Հռոմից «Times» լրագրին հաղորդում են որ իտալական ծովային մինիստրը հրաժարվում է իր պաշտօնից։ Նոյն լրագրի խօսքերով, պապը շատ անբաւական է թէ կղերական և թէ միւս ուղղութեան լրագրներից, որոնք չափազանց մեծ նշանակութիւն տուին կարդինալ Հոհենլոհէի Միւնխէն ուղևորվելուն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս Անգլիայում վախճանվեցաւ անգլիացի մատենագիր Մայն Ռիդ, որի ֆանտաստիկական վէպերը ամերիկական կեանքից մի ժամանակ մեծ յաջողութիւն ունէին։ Մայն Ռիդ, ընդհանրապէս խօսելով, հետևող էր Ֆենիմոր Կուպերի, բայց մի քանի կողմերով շատ բարձր էր նրանից։ Մայն Ռիդի նկարագրած պատկերները հնդկացիների կեանքից աւելի կոպիտ են Կուպերի գրաւիչ բանաստեղծական նկարագրութիւններից, բայց առաւել մօտ են կենսական ճշմարտութեանը։ Կապիտան Մայն Ռիդ այն առաւելութիւնը ևս ունէր, որ ինքն մասնակից է եղել այն անցքերի մեծ մասին, որոնց մասին պատմում է իր բազմաթիւ գրուածքներում։ Երիտասարդութեան ժամանակ Մայն Ռիդին պատրաստում էին քահանայութեան համար, բայց քսան տարեկան հասակում, նա կռուեց իր ծնողների հետ, հրաժարվեցաւ ատուանութիւնից և գնաց Ամերիկա։ Այնտեղ նա մի ժամանակ իսկական հնդկացու կեանք էր վարում, որսում էր գոմէշներին և այլն, և ապա աշխատակցում էր ամերիկական մի քանի լրագիրներին։ Մէկսիկայի հետ պատերազմի սկզբում Մայն Ռիդ մտաւ հիւսիսամերիկայի զօրքերի ծառայութեան մէջ։ Այդ պատերազմը Մայն Ռիդին հարուստ պաշար տուեց երևակայական վէպերի համար։ Նա միշտ յառաջապահ զօրագնդի մէջ էր գտնվում, մասնակցեց մի քանի կռիւներին և մեծ պատերազմներին, առաջնորդում էր հետևակ զօրքի փառաւոր յարձակմունքին Լէրաբիւսկօի տակ կատարվող արիւնահեղ կռուի ժամանակ և մեռածի նման թողվեցաւ Խապօլտէպէկի տակ դիակների կոյտի մէջ մի յաղթութիւնից յետոյ, որ վճռեց պատերազմի վիճակը և ստիպեց մէկսիկացիներին խաղաղութիւն խնդրել։ Այդ վերջին անցքի յիշողութիւնը Մայն Ռիդի վրա այնպիսի մեծ տպաւորութիւն գործեց, որ նա, իր վէպերի վերջում, յաճախ յարութիւն էր առնել տալիս այն գործող անձինքներին, որոնց մեռած էր համարում երկրորդ կամ երրորդ գլխում։ Ինչ և իցէ, դեռ Մայն Ռիդի վէրքերը կատարելապէս չէին առողջացել, երբ նա, ոգևորված երիտասարդների մի փոքրիկ խմբով ճանապարհ ընկաւ դէպի Եւրոպա ունգարական ապստամբութեանը մասնակցելու համար։ Փարիզ հասնելով, նա մեծ անբաւականութեամբ իմացաւ, որ այդ ապստամբութիւնը արդէն ճնշված է և որ Գէրզէյ զինաթափ է եղել։ Աչքի առաջ չունենալով իրական արկածներ, Մայն Ռիդ դիմեց երևակայութեան աշխարհին։ Օգուտ քաղելով իր սեփական կեանքի հարուստ շրջանակից, նա զարդարեց իր գրուածքները հնդկական դիւցազնական բանաստեղծութեան չքեղ նկարներով և այդպիսով ստեղծեց իր դրամատիկական հետաքրքրութեամբ լի վէպերը և պատմութիւնները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբերի։ Ֆինանսների մինիստրութեան կից կազմված է մի մասնաժողով մաքսային տարիֆը վերաքննելու համար։ Այդ մասնաժողովը, բացի Ֆինանսների մինիստրութեան ներկայացուցչից, կազմված է պետական կայքերի և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնների ներկայացուցիչներից։

ԼՕՆԴՕՆ, 27 հոկտեմբերի։ Հօն-կոնգից հաղորդում են, որ Չինաստանի մէջ եռանդով տեսնում են պատերազմական պատրաստութիւններ։ Պատերազմի կուսակից չինական գեներալ Ցանդ ընդունում է զօրքերի հրամանատարութիւնը Չինաստանի հարաւի վրա։ Ֆրանսիացիները յետաձգեցին մինչև դեկտեմբերը՝ յարձակումը Բանինգի վրա, այդ միակ քաղաքի վրա Տօնկինի մէջ, որ գրաւված է չինական զօրքերով։

ԽԱՐԿՕՎ, 27 հոկտեմբերի։ Վօրոնէժի զէմստվոյին թոյլ է տուած հետազօտութիւններ անել մի երկաթուղի կառուցանելու համար Պենզայից մինչև Լազովայա երկաթուղին մի ճիւղով մինչև Խարկով։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 27 հոկտեմբերի։ Եղանակը պարզ է. 22° աստիճան տաք է արևի տակ։

ԲԵԼԳՐԱԴ, 27 հոկտեմբերի։ Բանիի շրջականերում կռիւ պատահեցաւ սերբիական զօրքերի և ապստամբված գիւղացիների մէջ։ Հէնց որ զինուորները առաջին անգամ հրացաններ արձակեցին, որոնցից վեց գիւղացիներ սպանվեցան, ապստամբները պատրաստականութիւն յայտնեցին անձնատուր լինել և ներումն խնդրեցին։

ԲԵՐԼԻՆ, 27 հոկտեմբերի։ Նոյեմբերի առաջին օրերում գերմանական թագաժառանգ Գէնուայի վրայով Սպանիա կուղևորվի, իբրև կայսրի փոխանորդ Ալֆոնս թագաւորին փոխ-այցելութիւն գործելու նպատակով։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաղը, ԿԻՐԱԿԻ, հոկտեմբերի 30-ին, կը կայանայ ՎԱՆՔԻ ՄԱՅՐ-ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՆԿԱԿԱՆՊԱՐՏԷԶԻ հանդիսաւոր բացումը։

1—1

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՈՒՍԱՆՈՂ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ԴԱՍԵՐ ՌՈՒՍ ԵՒ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ։

ՀԱՍՑԷՆ ՀԱՐՑՆԵԼ „ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

1—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒ

«Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ **MINGRÉLIE** (ՄԻՆԳՐԵԼԻԱ)

որի նաւապետն է NEL (ՆԷԼ), հասաւ ՓՕԹԻ, հինգշաբթի 27-ին հոկտեմբերի։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագենտներին՝ ՓՕԹԻՈՒՄ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԲԸՆՕԻՆ, Արծրունու Գալերէա № 194.

KЁЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.

40—50

Կանանց ձմերային ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ, տղամարդկերանց ԳԼԽԱՐԿՆԵՐ և այլն ծախվում են էժան գներով։ ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ, ԱՐԾՐՈՒՆՈՒ գալերէա։

8—12

ԲԻԲԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրավաճառանոցում, որ գտնվում է Թիֆլիսում, Զուբալովի տանը, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, ստացվեցաւ Կ. Պոլսում հայերէն, կովկասեան աշխարհաբար լեզուով տպված, „ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ“ (Հին և նոր կտակարան)։

Գինը, գեղեցիկ կազմով 1 ր. 50 կոպէկ է։

3—10.

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԹԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

73—100

ՎԻԷՆՆԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ
ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՕՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կօշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքիք, հովանոցներ-ղոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, աղուխներ-բաղդադիք կովկասի ճաշակով, շապիկներ, ժամացոյցներ, ոսկէ և արծաթէ։ Ամեն տեսակ սպիտակեղէններ (շուշեղէն), որպէս են ստաքաններ, վազեր և այլն։ Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ-գդալներ ֆրաժի ֆաբրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գլխարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով։ Ծախվում են ֆաբրիկի գնով և առանց աւելցուկի (безъ-запроса)։ Ընդունում է պատուէրներ օտարքաղաքներից ամեն տեսակ ապրանքների։

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова. ՄԱՆԻ

Դուրս եկաւ մամուլի տակից Վաղարշապատում տպագրված եզնիկ քահանայ Եղնկեանցի նոր աշխատասիրութիւնը՝ „Ձայնագրեալ ազգային երգարան։“ Վաճառվում է Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցում։ Գինն է 80 կոպէկ։ Մի և նոյն տեղը վաճառվում են նոյն հեղինակի հետևեալ աշխատասիրութիւնները։

1. Մանկական երգարան առանց նօտաների . . . . . 20 կոպ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան . . . . . 40 կոպ.
3. Դասագիրք հայկ. Ձայնագրութեան . . . . . 30 կոպ.
4. Խմբական ձայնագրեալ երգարան . . . . . 50 կոպ.

9—10

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՔԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՒ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոդաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակավայժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուլթոներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մետաղների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի գդալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի գդալներ ֆրաժէի, մելխիորի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղներ 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրօններ րէվօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. թէց Պօպով Եղբայրների, կաֆէ Միխելսօնի, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԴԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. **М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.**

71—100



ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Զ Ի Ն Գ Ե Ր

ՆԻՒ-ԻՕՐԿԻ ՄԷՋ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ։

Ծախում է ամենալաւ համարված կարեմեքենաներ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահպանում են փչանալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թեթև ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու։ Ծախվում է

ԿԷՍ ՄԻԼԻՕՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱՒԵԼԻ ՏԱՐՎԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ։

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Զինգերի կարէմեքենաների համար։

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին գմայլեցնում են և այդ պատճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Զինգերի իսկական կարեմեքենաների տեղ։ Զգուշացնում եմ ձեզ, որ Զինգերի իսկական իւրաքանչիւր կարեմեքենան The Singer Manufacturing C-° ֆիրմայից ունի գործարանի գրոշմեր մեքենայի կոթի և մամուլի վրա. The Singer Manufacturing C-°,

Գ. ՆԷՑԳԼԻՆԳԵՐ, ԹԻՖԼԻՍ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

ԲԱԹՈՒՄԻ մէջ Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի։
ՔՈՒԹԱՅԻՍԻ մէջ Միխայլօվսկայա փողոց, տուն Շնէյդերի։
ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլօվսկայա փողոց, տուն Միրզա-Աւագօվի։

Իւրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Զինգերի ամենաօգտակար և իսկական կարեմեքենան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շաբաթական 1 ր. 50 կ. վճարելով առանց իսկական գինը բարձրացնելու։ Հնացած մեքենաները խանութը փոխում է։

24—50 (1)

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Октября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.